ՀՀ ԿԳՄՄՆ
<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ- ԱՌԱԿԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏՀՏ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Դասվար՝ Տիրուհի Ավետիսյան

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Առակի ուսուցումը տարրական դասարաններում ՏՀՏ գործիքակազմի օգնությամբ։- 4
3. Եզրակացություն 15
4. Օգտագործած գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործություն է,նրա կոլեկտիվ բանականության և կոլոկտիվ հույզի արգասիքը։Սկիզբ առելով այն անհիշելի ժամանակերից՝ հոսանուտ գետի պես, անընդհատ նորոգվել է,թարմացել,իր մեջ առելով ժողովրդական լայն զանգվածների աշխարհընկալումը ,դարավոր կենսափորձը,նրանց ըմբռնումներն ու իմաստությունը։ ժողովուրդն ստեղծել է գեղարվեստական խոսքի կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում։

Տարրական դպրոցում սկսած առաջին դասարանից ուսուցանվում են ժողովրդական բանահյուսության նմուշներ։ Սակայն առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի մայրենիի դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը։

Առակը խրատական բնույթի փոքրածավալ գեղարվեստական ստեղծագործություն է ։Առաջացել է ժողովրդական բանահյուսության մեջ, հետե սկսել է մշակվել առակագիր գրողների կողմից։

Առակը ունի այլաբանական իմաստ և բարոյախրատական բովանդակություն։ Այն բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից։ Սյուժեն դեպքերն ու իրողություններն են, իսկ բարոյախոսությունը՝ սկզբում կամ վերջում արտահայտված եզրակացությունը։

Աշխատանքի նպատակն է, թե ինչպես են դասավանդվում առակները և ինչ դեր ունեն դրանք սովորողի ուսումնական գործընթացի զարգացման և գիտելիքների ձևավորման վրա ,աշխարհայացքի, արժեհամակարգի վրա։

Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն, ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով։

Այսպիսով առակների դասավանդումը տարրական դասարաններում երբեք չի կորցնում իր գլխավոր նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները։

Առակի ուսուցումը տարրական դասարաններում ՏՀՏ գործիքակազմի օգնությամբ։

Առակներում հանդես են գալիս ինչպես մարդիկ, այնպես էլ կենդանիներ, բույսեր... Նրանց միջոցով ծաղրվում են մարդկային վատ սովորությունները, գովաբանվում՝ առաքինությունները։Այլաբանորեն գործածվելով շատ կենդանիներ վերածվել են խորհրդանիշների, օրինակ առյուծը՝ քաջության, հզորության, աղվեսը՝ խորամանկության...

Առակներն այլաբանորեն, ոչ ուղղակի կերպով աշակերտներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն, արդարություն, աշխատասիրություն, համեստություն։

Առակների միջոցով է, որ կրտսեր դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը (<<Ճայը և սագը>> Մխիթար Գոշ) , (<<Անտառն ու քամին >> Հրաչիկ Սևոյան) և այլն։

Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են։ Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից։

Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն, ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով։

Այսպիսով առակների դասավանդումը տարրական դասարաններում երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները։ Առակների միջոցով զարգանում է նաև աշակերտների ընթերցասիրությունը, կարդալու որակական հատկանիշները։

Ուստի տեղին է նշել, որ ավելի լավ կլիներ մայրենիի ընթերցարաններում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ դասական գրականության, ինչպես նաև նոր ժամանակների առակների նմուշների ներառմամբ։

Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը

անուղղակիորեն խրատում իրեն լսող և հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ։ Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը։

Առակը ուսուցողական, բարոյախրատական, դաստիարակչական բնույթի փոքրածավալ գրական գեղարվեստական ստեղծագործություն է։ Այն ունի բազմադարյա պատմություն։

Տարրական դասարաններում առակի ուսուցման ընթացքում անհրաժեշտ է նկատառել հետևյալ նրբությունները.

1. Նպատակահարմար չէ աշակերտներին անմիջապես <<հրամցնել>> առակի այլաբանական և փոխաբերական իմաստները, սովորողն ինքը պետք է կարողանա բացահայտել և վերլուծել առակի բարոյախրատական ուղղվածությունը, հասկանալ թե առակի մեջ որն է իրականը և որը՝ երևակայականը:
2. Բարոյախրատական իմաստի բացահայտումից հետո ցանկալի է համապատասխան խորհուրդ ունեցող առածների և ասացվածքների միջոցով ամրակայել սովորողների գիտելիքները։
3. Հարկավոր է ոչ միայն դերերով կարդալ առակը, այլ բեմականացնել նրա բովանդակային հատվածները։

Հնում <<առակ>> բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն։

Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է։ Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը։ Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի առակները։

XI-XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը։ Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները։ Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին <<Աղվեսագիրքն>> է (նկարահանվել է մուլտֆիլմ 1975թ.) : Ահա <<Իմաստուն զինվորը>> առակը <<Աղվեսագրքից>>:

Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա երկու ոտքով կաղ էր։ Եվ զինվորներից մեկը նրան ասաց. <<Ով ողորմելի, ու՞ր ես գնում։ Քեզ իսկույն կսպանեն,

որովհետև փախչել չես կարող>>: Եվ նա ասաց. <<Ով անմիտ, ես չեմ գնում պատերազմ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու>>: Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ:

Գոշի առակների նյութը հիմնականում հասարակական և կենցաղային խնդիրներ են: Գոշի առակների ուսուցումը հենց այս կարևոր առանձնահատուկ թեմաների փոխանցումն է մատաղ սերնդին: Մի շարք առակներում երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը: Առակներում Մխիթար Գոշը կենտրոնացած ուժեղ պետականության գաղափարն է արծարծում:

Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է ուսուցչի կողմից հստակ մեկնաբանվի յուրաքանչյուր միտքը իր արտահայտած իմաստով, քանզի այն կարող է երբեմն ստանալ ոչ ճիշտ ընկալում, քանզի առակն ինքնին խոհախրատական և փիլիսոփայական միտք է իրենից ենթադրում:

Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է հստակ տարանջատել բարին չարից, գեղեցիկը տգեղից և կարևորը անկարևորից: Մ. Գոշի առակներն ունեն այնքան խմաստուն մտքեր, որոնք հարկավոր է յուրաքանչյուր աշակերտ իմանա,որպես կյանքի հետագա ճանապարհի ճիշտ ուղի: Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հայոց իրականության մեջ մեծ իրադրություն էր:

Առակի ուսուցման ժամանակ հարկավոր է հաշվի առնել մի շարք կարևոր հանգամանքներ: Ուսուցիչը հստակ կերպով պետք է կարողանա տարանջատել հետևյալները.

ՆՊԱՏԱԿԸ՝ սովորողն ընկալի առակի իմաստը, բարոյախոսությունը, տարբերի նրան բնորոշ լեզվառճական հնարները, տեսնի առակի կարևոր առանձնահատկությունը՝ դաստիարակիչ նշանակությունը, հասկանա խոսքի տրամաբանությունը, կարողանա վերաբերմունք արտահայտել:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ - առակը կազմող նախադասություններ՝ գրված առանձին թերթիկների վրա (օրինակներ անտիկ, հայ միջնադարյան և ժամանակակից առակներից) :

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ՝ . Վերականգնել առակը

Վերնագրել

Գրել առակի իմաստը (ի՞նչ է սովորեցնում)

Գրել առակի իմաստին համապատասխան առածներ

Հերոսների մեկի անունից պատմել առակը

Նկարազարդել

Յուրաքանչյուր խմբին տրվում է մեկ <<խառնած >> առակ։ Առաջին և վերջին առաջադրանքի կատարմանը մասնակցում է ամբողջ խումբը, իսկ մյուսները խմբի ներսում բաժանվում են, կատարումը քննարկում են և ներկայացնում միասին։

ԱՄՓՈՓՈՒՄ

Ի՞նչ է առակը (մեթոդը ԳՈՒՍ)

Աշխատանքը ներակայացնելուց հետո գնահատվում է 2 փուլով։

Առաջին փուլում երեխաները գնահատում են իրենց աշխատանքը.

ա) Աշխատել եմ խմբի հետ

բ) Չեմ շեղվել առաջադրանքը կատարելիս

գ) Օգնել եմ ընկերներիս

Երկրորդ փուլում խմբերը գնահատում են միմյանց։

1. Իրար լսելը
2. Խոսքի հստակ ձևակերպումը
3. Տրամաբանական և ստեղծագործական մոտեցումը
4. Ակտիվությունը

Դասի վերջում կատարվում է անդրադարձ և աշակերտների տպավորությունները.

- Խառնած առակը հետաքրքիր է նրանով, որ սկսում ենք մտածել, թե ինչպես վերականգնենք
- Մեզ ավելի ինքնավստահ ենք զգում
- Ինձ դուր է գալիս խմբով աշխատելը
- Հետաքրքիր է
- Չաշխատողն անգամ հասցնում է ինչ-որ բան անել
- Խմբայինի ժամանակ աշխատում, արտահակտվում ենք բոլորս։

Առակների միջոցով երեխաների մեջ դաստիարակվում են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն։

Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում : Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին: Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:

<<Կռիլովի առակները ոչ թե սովորական այլաբանություններ են, այլ բանաստեղծական պատկերներ, փոքրիկ պատմվածքներ>>, գրել է Բելինսկին:

Առակների այս բնորոշումից պարզ երևում է՝ որը կարող է լինել դասավանդման ճիշտ ուղին, որպեսզի չխամրի դրանց գեղարվեստական արժեքը և դաստիարակչական ազդեցությունը:

Ներկայացնեմ Վարդան Այգեկցու << Առյուծն ու մուկը >> առակի մեթոդական շղթան:

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑ:

Ուսուցիչը հարցով դիմում է աշակերտներին:

Երբևէ որևէ մեկին օգնե՞լ ես: Ինչպե՞ս: Կամ քեզ օգնե՞լ են:

Աշակերտները պատմում են մի քանի դեպքեր, երբ օգնել են շրջապատի մարդկանց և այնպիսի դեպքեր, երբ իրենց են օգնել:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Ուսուցիչ- Ու՞մ կարող ենք համարել լավ ընկեր:

Աշակերտ- Լավ ընկերը, կամ լավ մարդը նա է, ով կարողանում է անհրաժեշտ պահին օգնության դեպք մեկնել իր ընկերոջը և լավ արարքներով փոխհատուցել մարդկանց:

Հանելուկների գուշակման միջոցով աշակերտները կռահում են առակի հերոսներին և նկարագրում նրանց:

Ահ, սարսափն է հազարների,
Գոռ արքան է գազանների:

Առյուծ

Ճստճստան է ու փոքրիկ
Եվ կրծում է ամեն ինչ:

Երբ որ փիսիկ է տեսնում,

Արագ վազում է փախչում։

Մուկ

Ուսուցիչը պատմում է, որ շատ առակագիրներ իրենց առակներում մարդկային լավ ու վատ կողմերը, ներկայացնում են բնության երևույթների, բույսերի ու կենդանիների միջոցով։ Վարդան Այգեկցին մեզ է ներկայացնում մի առակ, որի հերոսները ինչպես արդեն դուք գուշակեցիք, առյուծն ու մուկն են։ Դե եկեք տեսնենք, թե ինչի՞ մասին է առակը, և ի՞նչ է ուսուցանում այն։

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Առակի ընթերցում հատված առ հատված։

Առակի ամբողջական ընթերցում։

ԲԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Աղաչել- խնդրել, աղերսել

ցանց- թակարդ, ոստայն

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առյուծ, բարձրանալ, զարթնել, օգնել։

Տեքստի բաժանում տրամաբանական ամբողջություն ներկայացնող հատվածները։ Առակը բաժանում են հատվածների և վերնագրեր ընտրում նրանց համար։

1. Առյուծը ցանցում
2. Մկների օգնությունը
3. Մկան խնդրանքը

Վենի դիագրամի միջոցով նկարագրվում են առակի հերոսները՝ առյուծը և մուկը



ԱՇԽԱՏԱՆՔ ԱՐՏԱՀԱՅՏԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Աշակերտների ուշադրությունը հրավիրել կետադրական նշանների, ուրիշի ուղղակի խոսքի, նոր պարբերությունների վրա։

ԱՌԱԿԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Զրույցի քննարկումների և բանավոր հարցադրումների միջոցով աշակերտները պետք է կարողանան վեր հանել առակի հիմնակամ իմաստը, հասկանան նրա փոխաբերական նշանակությունը։

Ուսուցիչ- Ի՞նչ սովորեցրեց մեզ այս առակը։

Ո՞րն է առակի հիմնական միտքը։

Աշակերտ- Մկան և առյուծի կերպարների միջոցով արտահայտվում են մարդկանց կերպարները, նրանց լավ ու վատ արարքները, վերաբերմունքը միմյանց նկատմամբ։

- Կյանքում պետք է անպայման լավություն կատարել և կարողանալ լավ արարքներով օգտակար լինել միմյանց։
- Չթերագնահատեն մարդկանց և նրանց կարողությունները, չարհամարհեն միմյանց։

Առակի ազդեցությունն ամրակայվում է համապատասխան խորհուրդ ունեցող ասացվածքներով։

1. Ինչ ցանես, այն կհձես։
2. Դու ուրիշին օգնի՛ր, Աստված էլ քեզ կօգնի։
3. Մի՛ գովիր մարդու տեսքը, այլ գովի՛ր նրա կատարած աշխատանքը։

Առակի ուսուցման գործընթացն ամփոփվում է քառաբաժնի մեթոդով։

Առակների միջոցով սովորողը նոր որակներ է ձեռք բերում, նա արդարացիորեն դիտարկում և վերլուծում է մարդկային տարբեր բնավորություններ, քննադատում բացասականը՝ չարությունը, ծուլությունը, ագահությունը, ժլատությունը և այլն։ Եզոպոսի, Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու, Կռիլովի առակները, որոնք ներառված են դասագրքերում, սովորողին դաստիարակելու, կրթելու մեծ հնարավորություն են տալիս։

Հոգևոր, բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները։ Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ

դասեր են, որոնց վառ օրինակն է՝ <<Մանկական աստվածաշունչը>>, որտեղ Հիսուսը առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝ բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով։

Կարևորը և գլխավորն այն է, որ 12-13-րդ դարերում և հետո այժմ էլ ամեն տեղ առհասարակ սիրում էին առակներ և զրույցներ։ Ուստի առակների ժողովածուները դառնում էին հաճելի ընթերցանության գրքեր։

Փաստորեն առակը՝ որպես գրական տեսակ աստեղծվեց, քանի որ մարդ արարածը սիրում է սովորել օրինակով. ընդօրինակելը նրա համար ավելի հեշտ է, քան վերացական խրատը։

Առակը դաստիարակչական նպատակ ունեցող գրական տեսակ է և օգնում է մարդուն իրական կյանքում ավելի հեշտ ապրելու, այս առումով էլ առակներում մինչև այսօր սիրված են և շարունակում են մնալ որպես գրական տեսակ։

Տարրական դասարաններում գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցումն ունի մի շարք առանձնահատկություններ։Դրանց նկատառմամբ և ճիշտ գործադրմամբ աշակերտների նողմից թեմայի յուրացումը դառնում է առավել արդյունավետ։ Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման գործընթացն այնպես պետք է կազմակերպել, որ մայրենի լեզվով կարդալ և ընթերցածը պատմել սովորեցնելուց զատ ,ձևավորվեն ստեղծագործական ենթատեքստը հասկանալու, հերոսների գործողությունները վերլուծելու, լավը վատից, չարը բարուց տարբերելու, դրանց մասին դատողություններ անելու, համեմատելու և հակադրելու կարողություններ։

Հանրահայտ է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը։ Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են ՝ վաղվա պետություն կերտողները

Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակներից է և առկա է գրեթե բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ։ Այն այլաբանական բովանդակություն ունեցող պատմողական ստեղծագործություն է։

Առակում այլաբանորեն ներկայացնում են մարդկային կյանքի զանազան խրատական, հաճախ էլ երգիծական բովանդակություն։

Ըստ Մխիթար Գոշի առակները լինում են 3 տեսակ՝ բարոյական, առասպելական, ստեղծական։

Բարոյական առակները առնված են կենդանիների բարքից, բնավորությունից։ Առասպելական առակների մեջ պատմվածքը վերաբերում է կենդանիներիմ, երբեմն էլ բույսերին՝ իբրև գործող անձերի, իսկ ստեղծական առակները՝ մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են։

Լավագույնները այն առակներն են, որոնք առակագրքերի մեջ են մտել ժողովրդական բանահյուսությունից։ Դրանց պատմողական մասը առավելագույն չափով հակիրճ է, ամփոփ ու հստակ և լիովին հաղորդում է առակախոսի միտքը, միտումը, հուշում գաղափարը, այնպես որ ավելորդ է դառնում մեկնությունը։ Եվ իրոք, ժողովածուների առակներից շատերը մեկնողական մաս չունեն և դրանց կարիքը չի էլ զգացվում։

Հանրահայտ է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը։ Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները։

Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել կրտսեր դպրոցականների հուզաշխարհի վրա։ Այս առումով հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ տեղ ու դեր ունեն առակները, ինչպես նաև հեքիաթները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են աշխատասիրություն, հայրենասիրություն, ազնվություն։

Առակի հիմնական մտքի վերհանումը շատ ավելի դյուրըմբռնելի և պարզ է դառնում աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է թեմային վերաբերող առածների և ասացվածքների կիրառմամբ։

Առակը նման է պատմվածքի, ունի բովանդակություն, հերոսներ, տեղի են ունենում դեպքեր, կան նկարագրություններ։

Առակը նման է նաև հեքիաթի, կան կենդանիներ, բույսեր, որոնք խոսում են։
Տարրական դասարաններում առակների ուսուցումը զարգացնում է նաև երեխաների ստեղծագործական մտածողությունը։
Առակների ուսուցման ժամանակ հաճախ կիրառում ենք անակնկալ բեմականացումներ։
Այսպես Ա. Խնկոյանի <<Ճպուռն ու մրջյունը>> առակի դասավանդման ժամանակ աշակերտները բաժանվում են ճպուռների և մրջյունների՝ ներկայացնելով ոտանավորներ և հանելուկներ նվիրված ճպուռներին և մրջյուններին,և ով շատ ներկայացնի նա դառնում է հաղթող։

Առակների բեմականացման ժամանակ աշակերտները սովորում են ճիշտ խոսել՝ գիտակցելով խոսքի կառուցվածքը, լեզվական արտահայտության առանձնահատկությունները։

Առակների բովանդակության բացահայտման ժամանակ աշակերտները հասկանում են, որ իրենք ազատ են, կաշկանդված չեն։ Նրանք առակների մոտիվներով նկարազարդումներ ռն կատարում և հանգում են մտքի տրամաբանական ավարտին։

Ա. Իսահակյանի <<Արջը ու օձը>> առակի ուսուցման ժամանակ առաջարկվում է ներկայացնել արջի և օձի ընկերական երկխոսություն՝ պատասխանելով <<Ինչպիսի՞ մարդկանց են մարմնավորում կենդանիները>> հարցին։ Ներկայացվում են տեսակետներ ընկերության և ընկերների մասին՝ կատարելով եզրակացություններ։

Այնուհետև հանձնարարվում է աշակերտներին ներկայացնել առածներ և ասացվածքներ ընկերության մասին, կազմել նախադասություններ և բառակապակցություններ ընկեր, ընկերություն, ընկերասիրություն, ընկերանալ բառերով։

Որպեսզի առակների ուսուցումը առավել պատկերավոր լինի և լավ յուրացվի բոլոր աշակերտների կողմից, օգտագործում են ՏՀՏ- միջոցներ։ Առանց որի այսօր հնարավոր չէ արդյունավետ դաս վարել։

Այսօր ՏՀՏ-ն միջոց է դասբ ավելի հետաքրքիր և բազմաբովանդակ դարձնելու, առակների ուսուցումը ճշիտ կազմակերպելու և հմտություններ ձեռք բերելու, գիտական նոր նվաճումների ծանոթանալու ու կիրառելու համար։ Այո, դասարանում

առանց թուղթ ու գրիչի հնարավոր չէ, այսօր ՏՀՏն թուղթ ու գրիչին ոչ թե փոխարինող, այլ լրացնող միջոց է։

Առանց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման այժմ դժվար է հետաքրքիր դաս վարել, որ հետաքրքիր աշակերտին։

Շատ կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի հոգեբանական առանձնահատկությունները։

Կարևոր եմ համարում երեխային ինքնակազմակերպվելու և ինքնարտահայտվելու հնարավորություն տալը։ Այսօրվա դպրոցականը խաղում է բազմաթիվ համակարգչային խաղեր, տեսնում է վառ, գունեղ տեսահոլովակներ։ Ուսուցիչը կարող է օգնել նպաստել, որ սովորողները ինտերակտիվ տեխնոլոգիաների միջոցով կարողանան հնարավորինս լավ բացահայտել իրենց ստեղծագործական հնարավորությունները։

ՏՀՏ միջոցները լավ հնարավորություն են աշակերտի ստեղծագործական մտածողությունը բացահայտելու, նախաձեռնողական հնարավորություններն ընդլայնելու համար։

Այսօր ՏՀՏ գործիքների կիրառումը անգնահատելի դեր է խաղում ողջ կրթական համակարգում։ Այն հնարավորություն է տալիս ցանկացած ժամանակահատվածում բավարարել աշակերտի ցանկությունը , փնտրել, գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները։

ՏՀՏ-ի կիրառումը լայն հնարավորություն է ընձեռում նյութի ընկալման և աշակերտների ներգրավվածության հարցում։

:

Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք ասել,որ առակների ուսուցումը տարրական դպրոցում կարևոր նշանակություն ունի սովորողի կրթության և դաստիարակության գործում: Չնայած, որ առակների մեծ մասը կատակային բնույթի են, բայց դրանք զգալի ճանաչողական արժեք ունեն երեխաների համար:

Բոլոր դեպքերում առակները այլաբանորեն են անձնավորված են և սովորողը ի դեմս նրանց տեսնում է մարդկանց, նրանց հատկանիշների մեջ մարդկային հատկանիշներ, հարաբերություններ և ընդօրինակում լավը, բարին ու գեղեցիկը:

Առակների միջոցով է, որ կրտսեր դպրոցականը ընկալում է մայրենի լեզվի բարձրարժեքությունը:

Ուստի տեղին է նշել, որ ավելի լավ կլիներ մայրենիի ընթերցարաններում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ դասական գրականության, ինչպես նաև նոր ժամանակների առակների նմուշների ներառմամբ:

Օգտագործած գրականության ցանկ

1. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Եր.Անտարես. 2006
2. Մ.Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ, Երևան 1958
3. Մ.Աբեղյան, Երկեր Դ, Երևան 1966
4. Մայրենի 3-4 դասարանների ուսումնական ձեռնարկ, Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան
5. Խաչատրյան Ս.Գ. Աշակերտների ինքնուրույն աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին. << Նախաշավիղ >> 2003. Երևան